ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՇԱԿԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ



Վերջին երկու տարիները ռեկորդային էին ՁՊՄԿ-ի համար՝ արտադրության վերազինման տեսանկյունից:



«Թվային հուսալիություն». աշխատանքի նոր մշակույթ և դերերի հստակ բաշխում. ՁՊՄԿ-ի մասնագետների ամենօրյա աշխատանքը:



Տեղադրված 273 ֆոտովոլտային կայանները կարտադրեն շուրջ 40 մլն դրամի էլեկտրաէներգիա:

ԸՏԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

№61
2026թ.

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ QR ԿՈԴԸ՝ ԲԵՌՆԻՐ ԱՄՍԱԳՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ



Քաջարանի պատմությունը, անցյալն ու ապագան անբաժան են հանքագործի աշխատանքից

էջ 8

Ժամանակին համահունչ

Ժամանակակից արդյունաբերությունից խոսելիս անհնար է չհիշատակել նաև բարձր տեխնոլոգիաները: Մեր օրերում արդյունավետության, անվտանգության, տեխնոլոգիական լինելու առաջին վառ օրինակը ժամանակին համահունչ տեխնիկայի ու սարքավորումների առկայությունն է: Հենց այս ճանապարհով է գնում այսօր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ հետ չմնալով համաշխարհային առաջատար հանքարդյունաբերական ընկերություններից:

2025 - 2026 թթ. ՁՊՄԿ արտադրական հզորությունների զարգացման ուղին

Վերջին երկու տարին ռեկորդային էր ընկերության համար՝ արտադրության վերազինման տեսանկյունից: Օրինակ՝ 2024-ի համեմատ, 2025 թվականին 10 տոկոսով ավելի պղնձի խտանյութ է արտադրվել՝ 184.000 տոննա, նույն ժամանակահատվածում իրացվել է 13.000 տոննա մոլիբդենի խտանյութ:

Վերջին տարում բարձրացել է նաև արտադրողականությունը. 2026 թվականի առաջին կիսամյակում ստացվել է 127. 800 տոննա պղնձի խտանյութ, որում առկա մաքուր պղնձի ծավալը կազմել է 45.600 տոննա:

Արտադրական նման ցուցանիշների հասնել հնարավոր է ակտիվ աշխատանքի և տեխնիկական վերազինման արդյունքում: 2025 թվականին և 2026-ի առաջին կիսամյակում ընկերությունը ձեռք է բերել 26 ժամանակակից հանքային ինքնաթափ՝



10 LGMG RTH 100



3 Komatsu 785-7



10 БелАЗ 75585



3 CAT 789D


Այս տեխնիկաները թույլ են տալիս ավելի շատ հանքաքար հասցնել ջարդիչ արտադրամաս, որտեղից էլ սկսվում է արտադրական մեծ շղթան՝ ավելի մեծ ծավալով հարստացում, ավելի շատ պատրաստի խտանյութ:

Լեռնամետալուրգիան, սակայն, միայն նաև տեխնիկայի մասին չէ, պետք է ժամանակակից լինի նաև հարստացուցիչ ֆաբրիկան: Այս ուղղությամբ ևս՝ մեծածավալ ներդրումներ են իրականացվել:

2025 թվականին և 2026 թվականի առաջին կիսամյակում 50 միլիարդ դրամ ուղղվել է նոր սարքավորումների ձեռքբերմանը և արտադրական ակտիվների արդիականացմանը:

ԶՊՄԿ-ի բացառիկ ձեռքբերումներից կարելի է համարել Metso ընկերության TankCell e630 ֆլոտացիոն մեքենան. իր 630 մ³ ծավալով այն համարվում է աշխարհում խոշորագույններից մեկը: 11 մետր տրամագծով և 7 մետր բարձրությամբ այս գերժամանակակից սարքավորումը կրճատում է կապիտալ և շահագործման ծախսերը, պահպանում կորզման բարձր մակարդակը: Ֆլոտացիոն այս սարքավորումները նախատեսված են ընկերության նոր հարստացուցիչ ֆաբրիկայի համար, որը կառուցվում է արտադրողականության բարձրացմանն ուղղված աշխատանքների շրջանակում:


Metso TankCell e630





TDMK 1600







Ղևոնդ Գաբրիելյան

ԶՊՄԿ հարստացուցիչ ֆաբրիկայի պետ Ղևոնդ Գաբրիելյանի խոսքով, ֆաբրիկայում առկա սարքավորումներն աշխատում են նույն սկզբունքով, բայց այստեղ էական խնդիր է լուծում նոր ձեռք բերված սարքավորման բարձր արտադրողականությունը: Բացի այդ, նոր ու ժամանակակից սարքավորումներում ավտոմատացումը և արտադրական արդյունավետությունը ավելի բարձր մակարդակի վրա են, խնայող են, ավելի քիչ են մարդկային միջամտություն պահանջում: Մեկ այլ առավելություն է ճատնանշում Ղևոնդ Գաբրիելյանը. ժամանակակից սարքավորումների կիրառման պարագայում խափանումները քիչ են լինում, հարկադիր պարապուրդը՝ ևս:

Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ժամանակակից սարքավորումների աշխատանքին ծանոթանալու և ԶՊՄԿ-ում դրա կիրառության արդյունավետությունը պարզելու նպատակով աշխատակիցները պարբերաբար գործուղվում են աշխարհի լավագույն հանքարդյունաբերական ընկերություններ:

Վերջերս, Չինաստանում ԶՊՄԿ պատվիրակությունն ուսումնասիրել է աղացների՝ չինական արտադրության 6000 կվտ հզորությամբ սինքրոն շարժիչի աշխատանքը, որը ԶՊՄԿ-ն արդեն ձեռք է բերել և առաջիկա ամիսներին կկիրառի հարստացուցիչ ֆաբրիկայի հանքաքարի ինքնաճանրացման տեղամասում: Ղևոնդ Գաբրիելյանի խոսքով, այս սարքավորումը թույլ կտա աղացների աշխատանքը դարձնել հնարավորինս անխափան, պարապուրդները հասցնել նվազագույնի: Վերազինման աշխատանքներն ընկերության զարգացման ռազմավարության առանցքում են և կրում են շարունակական բնույթ: Պլաններում մի շարք ինքնաաղացների փոխարինման աշխատանքներն են:

«Թվային հուսալիություն». աշխատանքի նոր մշակույթ և դերերի հստակ բաշխում

Ինչո՞ւ է ՏՍՎ համակարգի ներդրումը փոխում ԶՊՄԿ-ի մասնագետների ամենօրյա աշխատանքը

«Տեխնիկական սպասարկում և վերանորոգում» (ՏՍՎ) համակարգի արդիականացումը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ռազմավարական քայլերից է, որն ուղղված է սարքավորումների վթարային պարապուրդների կանխարգելմանը, արտադրական գործընթացի անխափանության ապահովմանը և ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

Սակայն ցանկացած թվային տրանսֆորմացիայի հաջողության հիմքում մարդն է: Այս անգամ կպարզենք, թե կոնկրետ ինչ է փոխվում կոմբինատի աշխատակիցների համար, և ինչպես է թվային տեխնոլոգիան օգնում նրանց ավելի արդյունավետ աշխատել:

Անսարքությունների վերացումից՝ դեպի կանխատեսելի և պլանավորված աշխատանք

Առաջին հայացքից վերանորոգող անձնակազմի հիմնական խնդիրը մնում է անփոփոխ. աշխատակիցները շարունակելու են ապահովել սարքավորումների անխափան աշխատանքը, հայտնաբերել անսարքությունները և իրականացնել որակյալ ու անվտանգ վերանորոգում: Աշխատանքի բովանդակությունը չի փոխվում, սակայն արմատապես փոխվում են դրա կազմակերպման որակն ու միջավայրը:

«Թվային հուսալիություն» նախագծի ներդրմամբ արտադրական ստորաբաժանումներում ձևավորվում է նոր՝ բարձր կարգապահության վրա հիմնված մշակույթ: Անորոշությունն ու «հրդեհներ մարելու» ռեժիմով աշխատելու անհրաժեշտությունը փոխարինվում են հստակությամբ և կանխատեսելիությամբ: Այժմ աշխատակիցը նախապես և թափանցիկ կերպով տեսնում է՝

- ինչ աշխատանքներ են պլանավորված տվյալ հերթափոխի համար
- ինչ նյութեր, պահեստամասեր և գործիքներ են անհրաժեշտ դրանց կատարման համար
- որ անսարքություններն են առաջնահերթ և պահանջում են անհապաղ ուշադրություն
- ինչն է արդեն կատարվել, և ինչ դիտողություններ է անհրաժեշտ փոխանցել հաջորդ հերթափոխին:

Սա բացառում է քաոսային իրավիճակները, կրճատում է չհիմնավորված սպասման ժամանակը և վերանորոգող անձնակազմին տրամադրում է բոլոր անհրաժեշտ գործիքները՝ աշխատանքն անվտանգ և որակով կատարելու համար:

Նոր դերեր և պատասխանատվության հստակ սահմաններ

ՏՍՎ մոդելի շրջանակում վերանորոգման գործառույթում ձևավորվում և ամրագրվում են երեք մասնագիտացված դերեր:

1. Հուսալիության մասնագետ

Սա այն մասնագետն է, որը կենտրոնանում է սարքավորումների խափանումների պատճառների և դրանց հետևանքների վրա: Հուսալիության մասնագետը վերլուծում է անսարքությունները, բացահայտում պարապուրդների իրական պատճառները և մշակում միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել խնդրի կրկնությունն ապագայում: Այս բոլոր տվյալների վերլուծության հիման վրա նա ձևավորում է յուրաքանչյուր սարքավորման տեխնիկական սպասարկման ռազմավարությունը:

2. Պլանավորման մասնագետ

Պլանավորման մասնագետը որոշում է, թե երբ կարելի է իրականացնել աշխատանքները, ինչ ծավալով, ինչ հերթականությամբ և ինչ ռեսուրսների ներգրավմամբ: Նրա խնդիրն է վերանորոգումները դարձնել առավել նախապատրաստված և կանխատեսելի:

3. Սարքավորումների վերանորոգման վարպետ

Նրա հիմնական պատասխանատվությունն է ապահովել պլանավորված աշխատանքների անվտանգ, որակյալ և ժամանակին իրականացումը, ինչպես նաև մշտապես զարգացնել անձնակազմի մասնագիտական կարողությունները:

Համակարգված թիմային արդյունք

Պարտականությունների նման հստակ բաշխումը վերացնում է գործառույթների կրկնությունը և սահմանում պատասխանատվության գոտիները: Արդյունքում էապես բարձրանում է ստորաբաժանումների միջև փոխգործակցության որակը:

«Թվային հուսալիություն» նախագիծը ոչ միայն տեխնոլոգիական վերազինում է, այլև ներդրում ԶՊՄԿ-ի մարդկային կապիտալում. այն ամենօրյա աշխատանքը դարձնում է ավելի գիտակցված, նշանակալի և արդյունավետ:

Անդրեյ Սինյակով
ԶՊՄԿ ՓԲԸ Գործադիր տնօրեն



«Արդյունահանված հանքաքարի յուրաքանչյուր տոննա սկսվում է սարքավորումների հուսալի աշխատանքից: Որքան քիչ լինեն արտադրանային կանգառներն ու վթարները, այնքան աշխատանքը կլինի ավելի անվտանգ, արտադրությունը՝ ավելի կայուն, իսկ մեր առագաստ՝ ավելի վստահ: Հենց այդ պատճառով հուսալիությունը դառնում է կոմբինատի զարգացման առանցքային առաջնահերթություններից մեկը»:

Սքանավորիր QR կոդը՝ դիտի՛ր թվայնացման գործընթացի վերաբերյալ տեսանյութը:

«Մերգելյան ծրագիր». ինչպես է ձևավորվում ՁՊՄԿ-ի միասնական թվային կորիզը

«Թվային հուսալիություն» նախագիծը Ձանգեզուրի ղղնձամոլիբդենային կոմբինատի միակ խոշոր տեխնոլոգիական նախագիծը չէ. քայլ առ քայլ ձևավորվում է ձեռնարկության թվային կորիզը՝ միասնական միջավայր, որտեղ բիզնես գործընթացները, տվյալներն ու պատասխանատվությունը սերտորեն փոխկապակցված են:

«Թվային հուսալիություն» նախագիծը ներառված է փոփոխությունների ավելի լայնածավալ՝ «Մերգելյան» ծրագրում, որն ընդգրկում է ընկերության 8 ֆունկցիոնալ ուղղություններ՝ նորմատիվ-տեղեկատու տեղեկատվության կառավարումից, աշխատավարձի և աննձնակազմի կառավարման (1C:ЗУП) գործընթացներից մինչև գնումներ, պահեստներ, արտադրության կառավարում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) հաշվառում, հարկային հաշվառում և ՏԱՎ համակարգ:

Թե ինչ նպատակ է հետապնդում «Մերգելյան ծրագիրը» և ինչ է այն փոխելու աշխատակիցների ամենօրյա գործունեության մեջ, ներկայացնում է ՁՊՄԿ գլխավոր տնօրենի թվայնացման գծով տեղակալ Սաղրկ Ազիմովը:

- Ինչո՞ւ է թվային տրանսֆորմացիայի ծրագիրը ՁՊՄԿ-ի համար կարևոր հենց հիմա և ի՞նչ խնդիր է այն լուծում բիզնեսի համար:

- Ձեռնարկության մասշտաբը պահանջում է, որպեսզի որոշումներն ընդունվեն միասնական և ժամանակին հասանելի տեղեկատվության հիման վրա: Իրականացված ուսումնասիրությունը տարբեր ֆունկցիոնալ ուղղությունների համար ընդհանուր խնդիր է բացահայտել. տվյալների և հաշվարկների զգալի մասը պահվում է տարանջատված ֆայլերում, թղթային փաստաթղթերում և տեղային համակարգերում: Արդյունքում նույն տեղեկատվությունը կարող է մի քանի անգամ մուտքագրվել, իսկ ամբողջական պատկերի ձևավորումը ժամանակ է պահանջում:

Հետևաբար, ծրագրի խնդիրը շատ ավելի լայն է, քան նոր ծրագրային աղահովման ներդրումը: Ֆինանսատնտեսական մոդելը ծրագրի նպատակները սահմանում է որպես բիզնես գործընթացների ստանդարտացում, վերահսկողության և հաշվառման թափանցիկության բարձրացում, միասնական ինտեգրված ERP միջավայրի՝ ձեռնարկության ռեսուրսների պլանավորման միասնական համակարգի զարգացում և անհրաժեշտ կազմակերպական փոփոխությունների իրականացում:

Գործնականում սա նշանակում է ավելի քիչ ձեռքի աշխատանք, գործառնությունների ավելի բարձր հետագծելիություն և կառավարման որոշումների ընդունման համար հավաստի տվյալների ավելի մեծ ծավալ:

- Ինչպե՞ս են փոխկապակցված ութ նախագծերը, և ծրագրի ո՞ր փուլերն են իրականացվելու առաջիկայում:

- Կաղը տեսանելի է ցանկացած ամբողջական գործընթացում: Միասնական տեղեկատուն նկարագրում է նյութը, արտադրական կամ վերանորոգման ստորաբաժանումը ձևավորում է պահանջը, գնումների գործընթացն աղահովում է մատակարարումը, պահեստն արտացոլում է շարժը, պայմանագիրը սահմանում է պարտավորությունները, գանձապետարանը պլանավորում է վճարումը, հաշվապահական և հարկային հաշվառման համակարգերն արտացոլում են գործառնությունը, իսկ ֆինանսական արդյունքն արտացոլում է դրա ազդեցությունը բիզնեսի վրա:

Ինչ վերաբերում է փուլերին, նախագծերը գտնվում են պատրաստվածության տարբեր աստիճաններում: Նորմատիվ-տեղեկատու տեղեկատվության կառավարման նախագծի համար առաջիկա փուլը փորձաարդյունաբերական շահագործման պատրաստվածության հաստատումն է՝ տվյալների որակի և նորմալացման, դերերի, ուսուցման և 1C:ERP ՍՀ-ի ներդրմանը նախորդող աշխատանքային կարգի մասով:

1C:ЗУП-ի համար հիմնական խնդիրն իրական օգտատերերի սցենարների կայունացումն ու աջակցության համակարգի ամրապնդումն է: Նախագծման փուլում գտնվող մյուս ուղղությունների շրջանակում անհրաժեշտ է համաձայնեցնել նպատակային գործընթացները, դերերը, տեղեկատուները, ինտեգրումները, ինչպես նաև տվյալների և հաշվետվողականության նկատմամբ պահանջները:

- Ի՞նչ է փոխվելու աշխատակիցների համար:

- Փոփոխությունները կախված կլինեն աշխատակցի դերից, սակայն ընդհանուր սկզբունքը մնում է նույնը. գործառնությունները պետք է իրականացվեն հասկանալի ընթացակարգով, իսկ կարգավիճակն ու պատասխանատվությունը պետք է տեսանելի լինեն:

Սովորական Excel ֆայլերի, թղթային մատյանների և ձեռքով իրականացվող համաձայնեցումների մի մասը կփոխարինվի համակարգում կատարվող գործողություններով: Տեղեկությունը պետք է մուտքագրվի ժամանակին և միասնական կանոններին համապատասխան:

Անցումային փուլում դա կպահանջի ուսուցում և կարգապահություն, իսկ որոշ դեպքերում՝ ժամանակավոր ընթացակարգերով զուգահեռ աշխատանք: Սակայն վերջնական նպատակը բյուրոկրատիայի ավելացումը չէ, այլ, ընդհակառակը, տվյալների կրկնակի մուտքագրման, փաստաթղթերի որոնման և ձեռքով իրականացվող հաշվետվությունների ծավալի կրճատումը, ինչպես նաև վերլուծության, պլանավորման և արտադրական խնդիրների լուծման համար ավելի շատ ժամանակի ազատումը:



- Ի՞նչ դեր ունեն տվյալների որակը, միասնական գործընթացները և ղեկավարների ներգրավվածությունը:

- Համակարգն ինքնուրույն չի ուղղի ոչ տվյալները, ոչ գործընթացները: Եթե տեղեկատուն պարունակում է կրկնվող գրառումներ, դերերը սահմանված չեն, իսկ շեղումները չեն վերլուծվում, թվային գործիքը պարզապես ավելի արագ կվերարտադրի նախկին խնդիրները: Հետևաբար տվյալների որակը և միասնական կանոնները ծրագրի հիմքն են:

Ղեկավարները փոփոխությունների սեփականատերերն են. նրանք որոշումներ են ընդունում նպատակային գործընթացի վերաբերյալ, լուծում են տարբեր ֆունկցիոնալ ուղղությունների միջև առաջացող տարաձայնությունները, աղահովում են աշխատակիցների մասնակցությունը և վերահսկում, որպեսզի նոր կանոնները գործեն ոչ միայն նախագծային սխեմայում, այլև ամենօրյա աշխատանքում:



Սքանավորի՛ր QR կոդը՝ մանրամասներին ծանոթանալու համար

Զևավորելով ապագա երկրաբաններին. կայացավ «Պատանի երկրաբանի ամառային ճամբար 2026-ը»

Երկրորդ տարին անընդմեջ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և Երևանի պետական համալսարանի աշխարահագրության ու երկրաբանության ֆակուլտետի համագործակցությամբ կայացավ «Պատանի երկրաբանի ամառային ճամբարը»: Այն մեկնարկեց բանախոսություններով, հարցուպատասխանով՝ կոմբինատի գործունեության, երկրաբանի դերի և կարևորության մասին: Մասնակից 30 ճամբարականները Սյունիքի մարզից էին, որոնք ընտրվել էին հայտ ներկայացրած 80 դպրոցականներից:

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանի խոսքով՝ ոլորտի հանդեպ հետաքրքրությունը նկատելի է: **Նախորդ տարվա ճամբարից հետո 3 աշակերտ արդեն սովորում է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում, ընդ որում, նրացից մեկը, միևչ ճամբարը, ցանկանում էր իրավաբան դառնալ**,-նշում է դեկանը:





Պրոֆեսորադասախոսական կազմը կարևորում է, տեսականից բացի, գործնական գիտելիքներ փոխանցելը: Ճամբարն ամփոփվեց ընկերական ու ջերմ մթնոլորտում՝ խարույկի շուրջ ազգային պարերով: Մասնակիցներին հանձնվեցին հավաստագրեր հանքարդյունաբերական ձեռնարկության գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի կողմից: «Պատանի երկրաբանի ամառային ճամբարը» նպաստեց աշակերտների ունեցած գիտելիքների խորացմանը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանը: Ծրագրի պատասխանատուների խոսքով՝ այն շարունակական կլինի և տարեցտարի կընդլայնվի:

Աննա Մելքումյան

Ավելի միասնական, ավելի ուժեղ. «Առողջության օր 2026»

Արդեն ավանդույթ դարձած մարզական տոնն այս տարի համախմբեց Ընկերության և Քաջարան համայնքի մարզասեր հասարակությանը: Մրցումների անցկացման համար ընտրվել էր խորհրդանշական վայր՝ ընկերության նախկին՝ Փուխրուտի ոչ-չամբարի ռեկուլտիվացված տարածքը, որը վերածվել է բնաոչհիմնական վերականգնման հաջողված օրինակներից մեկի:



Փուխրուտի ոչնամբար

- Փուխրուտի ոչնամբարը շահագործման է հանձնվել **1958 թվականին՝** Հանքարդյունաբերական գործունեության ավարտից կամ առանձին փուլերի դադարեցումից հետո տարածքի հետագա կառավարման երկու կարևոր ուղղություններն են կոնսերվացիան և ռեկուլտիվացիան՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արտադրական ոչնեերը կուտակելու նպատակով
- Այն շահագործվել է շուրջ **11 տարի և 1969 թվականին կոնսերվացվել է** (ոչնամբարը ժամանակավորապես չօգտագործվող, բայց անվտանգ ու վերահսկվող վիճակում պահել)՝ դառնալով կոմբինատի առաջին փակված ոչնամբարներից մեկը
- Ոչնամբարը գտնվում է Փուխրուտ գետի կիրճում՝ Լեռնաձորի տարածքում, Ողջիի ոչնամբարից մոտ **1,5 կմ** հեռավորության վրա
- Նախագծային ծավալը, ըստ պաշտոնական տվյալների, **3,2 մլն մ³** է, և այն ամբողջությամբ լցված է:

Ինչպե՞ս է օգտագործվում այժմ

Կոնսերվացումից հետո ոչնամբարը ռեկուլտիվացվել է, այսինքն՝ ծածկվել է հողի շերտով և կանաչապատվել: Այսօր տարածքն արդեն շահագործվում է, իսկ տարածքում իրականացված վերջին մասշտաբային միջոցառումը «ՁՊՄԿ առողջության օր-2026»-ն էր:

Այս հանգամանքը կոտրում է կարծրատիպերը, որ կոնսերվացված և ռեկուլտիվացված ոչնամբարների տարածքներն այլևս պիտանի չեն: Ռեկուլտիվացված ոչնամբարների ու հանքերի տարածքը զբոսաշրջային վայրերի վերածելու բազմաթիվ հաջողված օրինակներ կան Կանադայում, Ավստրալիայում, Եվրոպայում և այլուր:

Սքանավորի՛ր QR կոդը՝ դիտի՛ր Առողջության օրվա տեսանյութը:

Այս տարի «Առողջության օր»-ին մասնակցում էր 14 թիմ և շուրջ 420 աշխատակից: Երկու օր շարունակ նրանք մրցեցին տարբեր մարզաձևերում՝ ցուցադրելով ոչ միայն ֆիզիկական պատրաստվածություն, այլև թիմային աշխատանք և հաղթելու կամք:

Թիմային պայքարը մրցումների ընթացքում չէր սահմանափակվում միայն մարզադաշտով: Մասնակիցներն իրենց ուժերը փորձեցին նաև խոհարարական մրցույթում՝ ներկայացնելով բազմազան ուտեստներ, հյուրասիրություններ և ստեղծագործ մոտեցումներ, որոնք միջոցառմանը հաղորդեցին ջերմ, ընտանեկան մթնոլորտ:
ՁՊՄԿ մարդկային ռեսուրսների տնօրեն Զարա Սիսակոզովան հատկանշեց, որ նման նախաձեռնությունները կարևոր դեր ունեն աշխատակիցների միջև կապերի ամրապնդման գործում, և «Առողջության օր»-ը վաղուց արդեն միայն սպորտային մրցաշար չէ: Այն դարձել է կորպորատիվ մշակույթի կարևոր բաղադրիչ, որտեղ մրցակցությունը զուգորդվում է համագործակցությամբ, հաղթանակը՝ համախմբվածությամբ:

Երկօրյա լարված և հետաքրքիր մրցաոյայքարի արդյունքում՝
առաջին հորիզոնականը զբաղեցրեց Անվտանգության դեպարտամենտի «Ջանգեզուր» թիմը,
երկրորդ հորիզոնականը՝ ՁՊՄԿ միավորված «Անհաղթ արջեր» թիմը,
երրորդ պատվավոր հորիզոնականում էր՝ Պոչամբարային տնտեսության «Խուստուփ» թիմը:

ՁՊՄԿ և Քաջարան համայնքի միջև անցկացված առանձին մրցաոյայքարում հաղթանակը բաժին հասավ լեռնագործների քաղաքին:

Հաղթողները պարգևատրվեցին գավաթներով և դրամական մրցանակներով: Այս տարի սահմանվել էին նաև գլխավոր տնօրենի անվանական հատուկ մրցանակներ, որոնք հանձնվեցին առավել ակտիվ և նախաձեռնող մասնակիցներին:

Անի Գրիգորյան



Հանքագործի և մետալուրգի օր 2026.

մարդիկ, որոնց աշխատանքով ստեղծվում է վաղվա արդյունաբերությունը

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի օրացույցում Հանքագործի և մետալուրգի օրը վաղուց արդեն վերածվել է կարևոր խորհրդանիշի: Այն միայն մասնագիտական տոն չէ, այլ հնարավորություն՝ գնահատելու անցած ճանապարհը, արժևորելու ձեռքբերումները և շնորհակալություն հայտնելու այն մարդկանց, որոնց ամենօրյա նվիրումի շնորհիվ շարունակում է զարգանալ Հայաստանի ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկը:

Այս տարի մասնագիտական տոնն առանձնացավ ոչ միայն հանդիսավոր մթնոլորտով, այլև այն գաղափարով, որն ուղեկցում էր ողջ միջոցառմանը՝ արդյունաբերության ամենամեծ արժեքը մարդն է:

Տոնական միջոցառման մեկնարկը տրվեց ԶՊՄԿ լրատվության և հանրության հետ կապերի բաժնի լուսանկարիչ Նվեր Զելյայի անհատական լուսանկարչական ցուցահանդեսով: Ցուցահանդեսի գլխավոր հերոսը Սյունիքն էր՝ իր լեռներով, մարդկանցով, բնությամբ և աշխատանքային առօրյայով: Յուրաքանչյուր լուսանկար պատմում էր հայրենի եզերքի մասին՝ բացահայտելով այն գեղեցկությունն ու ուժը, որոնք տարիներ շարունակ ոգեշնչել են հանքագործներին:

«Սյունիքն անկրկնելի է: Նրա յուրաքանչյուր անկյունը, յուրաքանչյուր քար, ծառ ու սար ունեն իրենց յուրահատկությունը: Նմանները գուցե լինեն, բայց կրկնվողներ չկան: Այս լուսանկարների հետևում տարիների աշխատանք կա, և յուրաքանչյուր կադր ինձ համար առանձնահատուկ պատմություն է»,- ասում է Նվեր Զելյան:

Հայաստանի տնտեսության շարժիչ ուժերից մեկը շարունակում է մնալ հանքարդյունաբերությունը: Տարիների ընթացքում ոլորտը ոչ միայն պահպանել է իր կարևորությունը, այլև դարձել է տեխնոլոգիական վերափոխումների հարթակ, որտեղ նորարարությունը համադրվում է երկարամյա փորձի հետ: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն այս ճանապարհին շարունակում է ներդնել ժամանակակից լուծումներ՝ ձևավորելով ոլորտի զարգացման նոր չափանիշներ:

Քաջարան համայնքի ղեկավարի խոսքով՝ քաղաքի պատմությունն ու առագաստ անբաժան են հանքագործի աշխատանքից:



Սքանավորիր QR կոդը՝ դիտի՛ր տոնական միջոցառման մասին հաղորդումը:



«Քաջարանն այն քաղաքն է, որը կյանք է առել հենց հանքագործի քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Այն անցել է փայլուն ճանապարհ և այսօր դարձել է ոչ միայն մեր տնտեսության ողնաշարերից մեկը, այլև Հայաստանի այցեքարտը երկրի սահմաններից դուրս»:

Մասնագիտական տոնի առթիվ շնորհավորելով ոլորտի ներկայացուցիչներին ասաց ԶՊՄԿ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին: Նա խոսեց նաև Հայաստանի հանքարդյունաբերության զարգացման հեռանկարների մասին՝ վստահություն հայտնելով, որ առաջիկա տարիները նոր հնարավորություններ են բացելու ոլորտի համար:

«Կարծում եմ՝ Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտը մեծ ապագա ունի: Այսօր հատկապես երկրաբանական հետախուզության ոլորտում իրականացվող աշխատանքները դրա լավագույն ապացույցն են: Ոչ միայն տեղական, այլև արտասահմանյան ընկերությունները պատրաստ են ներդրումներ կատարել, և դա ամենակարևոր ցուցանիշն է, որ Հայաստանի ընդերքի նկատմամբ վստահություն կա: Ես միշտ ասել եմ, որ ոլորտը զարգացման տեսանկյունից թերագնահատված է, սակայն այն ունի բացառիկ մեծ ներուժ և խոստումնալից ապագա: Այսօր հանքարդյունաբերության մեջ արդեն ներդրված են լեռնահանքային գիտության ամենաառաջատար տեխնոլոգիաները»,- նշեց նա:

Տեխնոլոգիական վերափոխումները ԶՊՄԿ-ի զարգացման ռազմավարության կարևոր ուղղություններից են: Ընկերությունում արդեն երկու տարի իրականացվում է Հայաստանի մասշտաբով աննախադեմ թվայնացման ծրագիր, որի նպատակն է ստեղծել ամբողջությամբ թվայնացված և ավտոմատացված արտադրական շղթա:

ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանի խոսքով՝ շարունակական վերազինումները կազմակերպության զարգացման շարժիչ ուժերից են:

«Մենք նախաձեռնել ենք Հայաստանի մասշտաբով աննախադեմ թվայնացման ծրագիր, որի վրա աշխատում ենք արդեն շուրջ երկու տարի: Եվս մի քանի տարի անց կունենանք ամբողջությամբ թվայնացված և ավտոմատացված արտադրական շղթա, ինչը մեր աշխատանքը կդարձնի ավելի արդյունավետ, արտադրական գործընթացները՝ առավել տեսանելի և կառավարելի: Մշտական վերազինումները մեր առաջընթացի կարևոր նախապայմաններից են: Վստահ եմ՝ այս տարին ռեկորդային կլինի թե՛ արտադրական ծավալների, թե՛ պետական բյուջե վճարված հարկերի առումով»:

Սակայն նույնիսկ ամենաժամանակակից տեխնոլոգիաները չեն կարող փոխարինել մարդկանց: Հանքաքարից մինչև պատրաստի մետաղ տանող ճանապարհի յուրաքանչյուր փուլում կանգնած են մասնագետներ, որոնց գիտելիքը, փորձն ու պատասխանատվությունը ձևավորում են ընկերության հաջողությունները:

Մասնագիտական տոնի շրջանակում բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար պարգևատրվեցին ընկերության 18 աշխատակիցներ:

Պարգևատրված աշխատակից Գայանե Իվանյանը խոստովանում է, որ նման գնահատանք չէր սպասում:

«Չեի սպասում, որ նման պատվի կարժանանամ: Աշխատանքս միշտ սիրով եմ կատարել և միշտ զգացել եմ, որ այն գնահատվում է: Այս մրցանակը նոր ուժ ու պատասխանատվություն է տալիս շարունակելու նույն նվիրումով աշխատել»:

Ընկերության մեկ այլ աշխատակից՝ Վահագն Ներսիսյանը, համոզված է, որ նման ճանաչումը պարտավորեցնում է ավելի մեծ նվիրումով շարունակել աշխատանքը:

«Այս տոնը և լավագույն աշխատողի կոչումն ավելի են պարտավորեցնում: Հեռանկարները մեծ են: Մեր ընտանիքում մի քանի սերունդ աշխատել է կոմբինատում, և այդ



աշխատանքը մեզ հնարավորություն է տվել ապահովելու բարեկեցիկ կյանք: Հպարտ եմ, որ շարունակում եմ այդ ճանապարհը»:

ԶՊՄԿ-ում վստահ են՝ ոլորտի ամենամեծ կապիտալը մարդիկ են: Նրանց նվիրվածությունն ու մասնագիտական պատասխանատվությունն են ապահովում ոչ միայն արտադրական հաջողությունները, այլև ընկերության շարունակական զարգացումն ու մրցունակությունը:

Օրվա պաշտոնական հատվածն ավարտվեց տոնական համերգով: Սիրված կատարողների ելույթները մասնագիտական տոնին հաղորդեցին ջերմություն, երաժշտություն և բարձր տրամադրություն՝ դառնալով գեղեցիկ եզրափակում մի օրվա, որը ևս մեկ անգամ ընդգծեց հանքագործի և մետալուրգի աշխատանքի արժեքն ու նշանակությունը Հայաստանի ներկայի և ապագայի համար:

Անի Գրիգորյան

Պարգևատրված




Անահիտ Գևորգյան




Վազգեն Հայրապետյան



Վահագն Ներսիսյան



Արմեն Ստեփանյան




Արարատ Ամիրջանյան



Արման Գրիգորյան



Բորիս Նազարյան



Ֆելիքս Չիլինգարյան



Արամ Մարգարյան

աշխատակիցներ



Գայանե Իվանյան



Նորայր Սողոմոնյան




Դերենիկ Մովսիսյան



Սենիկ Ասրյան



Հայկ Թադևոսյան



Արարատ Ստեփանյան



Լևոն Համբարձումյան



Համազասպ Մկրտչյան



Մարատ Խաչատրյան



Կանաչ ճախագիծ

Արևն օգնում է չվճարել էլեկտրաէներգիայի դիմաց

Կապան համայնքի Սյունիք, Սզնակ, Դիցմայրի, Բարգուշատ, Խորձոր բնակավայրերին բարձր դիրքից դիտելիս՝ տպավորություն կստանաք, թե բոլոր տանիքները հայելապատ են: Ձեր աչքերը ձեզ չեն խաբում՝ այս գյուղերի բոլոր 273 տանիքներին տեղադրված են արևային կայաններ, որոնք ժամում մինչև 2 կՎտ էներգիա են արտադրում: Նախաձեռնությունը Կապանի համայնքապետարանինն է, ֆինանսավորումն ամբողջությամբ ստանձնել է ՁՊՄԿ-ն, աշխատանքների իրականացումը վստահվել է Ֆրիէներջի ընկերությանը:

Ֆրիէներջիի տնօրեն Արարատ Չոբանյանը վերջերս այցելել էր բնակավայրեր, հանդիպել բնակիչներին, աննձամբ ներկայացրել սպասվող խնայողության ծավալները:

- Մեկ տնտեսության համար, եթե հաշվարկենք, տվյալ տեղանքում տարեկան արտադրողականությունը կհասնի 2900-ից մինչև 3 հազար կիլովատի, որը մոտ 140-150 հազար դրամ է: Ընտրվել են նման ներքին ցանցեր ունեցող բնակավայրերի համար հարմար սարքեր: Տներից յուրաքանչյուրին տրամադրվել է հավասար հզորության ֆոտովոլտային կայան: Տների վրա տեղադրվել են երկու հարյուր լիտր տարողությամբ ջրատաքացուցիչներ: Ջրատաքացուցիչներ չկան միայն բազմաբնակարանների տանիքներին՝ տեղ չլինելու պատճառով:

- Սյունիք բնակավայրը հանրապետության ամենաարևոտ վայրերից մեկն է, արտադրված էլեկտրաէներգիան կարելի է կուտակել, բայց անընդհատ տաքացվող ջուրը՝ ոչ: Արարատ Չոբանյանը խորհուրդ է տալիս կենցա-





ղավարության մեջ ավելացնել տաք ջրի օգտագործումը: Նկատենք՝ մինչև արևային կայանների և ջրատաքացուցիչների տեղադրումը վերոնշյալ հինգ գյուղական բնակավայրերում աղրողների միայն 30 տոկոսն ուներ տաք ջուր, հիմա ունեն բոլորը:

- Ջրատաքացուցիչ համակարգեր տեղադրվել են 227 տների տանիքներին: Եթե մենք համեմատենք գազի ծախսի հետ, կարող ենք հայտարարել, որ բնակավայրերում ջրի տաքացման համար կտնտեսվի տարեկան շուրջ 24 մլն դրամ,- ասում է Արարատ Չորաքյանը՝ հավելելով, որ սարքերն ունեն 10 տարվա երաշխիք: Բացի այդ ընթացիկ տեխնիկական սպասարկումը կատարվելու է ընտրված և համապատասխան ուսուցում անցած տեղացի երիտասարդները:

- ՋՊՄԿ-ի ֆինանսավորմամբ նմանատիպ մի նախագիծ էլ իրականացվել է Բրկենանց, Չափնի, Արծվանիկ, Սևաքար և Աճանան գյուղական բնակավայրերում, որտեղ տրամադրվել են արևային ջրատաքացուցիչներ 4 և ավելի երեխա ունեցող բոլոր ընտանիքներին: Հանքարդյունաբերական ձեռնարկության ներդրումն այս նախագծերում կազմել է ավելի քան 227 մլն դրամ:



Ձեռնարկության ներկայացուցչի խոսքով՝ նախագիծը ստեղծել է կանաչ էներգիայով աղահովված բնակավայր:

- ՋՊՄԿ՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակում, կարևորում ենք արևային կայանների և ջրատաքացուցիչների տեղադրման ծրագիրը մեր ազդակիր համայնքներում: Առաջին հերթին դա հնարավորություն կտա շահառուներին խնայել ընտանեկան բյուջեն, կրճատել էներգիայի և վառելափայտի ծախսերը: Գյուղական բնակավայրերի բնակիչները կունենան ոչ միայն սեփական էլեկտրաէներգիան, այլև տաք ջուր, որը կթեթևացնի կենցաղը: Երկրորդը բնապահպանական օգուտն է՝ կկրճատվի անտառհատումը, կնվազեն արտանետումները,- ասում է ՋՊՄԿ սոցիալական ծրագրերի ավագ համակարգող Գայանե Թադևոսյանը:

Այս ծրագրով տեղադրված ֆոտովոլտային կայանների արտադրած էլեկտրաէներգիան բնակիչները կարող են ամռանը կուտակել, ձմռանն օգտագործել: Յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին կատարվելու է վերահաշվարկ, և բնակիչներն արտադրած, բայց չսպառած էլեկտրաէներգիայի համար ստանալու են փոխհատուցում:

Տիգրանուհի Բադալյան

Վերոնշյալը՝ թվերով

ՋՊՄԿ-ն 227 մլն դրամ է տրամադրել, որպեսզի ազդակիր 5 գյուղի բոլոր բնակիչներն ունենան սեփական արևային էլեկտրակայան և ջրատաքացուցիչներ, ևս 5 գյուղի 50 բազմազավակ ընտանիքների տրամադրվել են ջրատաքացուցիչներ: Տեղադրված 273 ֆոտովոլտային կայանները կարտադրեն շուրջ 40 մլն դրամի էլեկտրաէներգիա: Ջրատաքացուցիչներից յուրաքանչյուրի խնայողությունը, գազով աշխատող կաթսաների համեմատ, գերազանցում է 100 հազար դրամը:



«Կաոյան Ֆեստ 2026»-ը

Կաոյանը կրկին 10 օրով դարձրեց միջազգային երաժշտական կենտրոն

Հուլիսի 4-ից 14-ը Կաոյանում անցկացված «Կաոյան Ֆեստ 2026» միջազգային երաժշտական փառատոնն արդեն չորրորդ տարին անընդմեջ Սյունիքի մարզը վերածեց համաշխարհային երաժշտարվեստի ճշանավոր ներկայացուցիչների, երիտասարդ տաղանդների և արվեստասեր հանդիսատեսի հանդիպման միջազգային հարթակի:

Փառատոնը համախմբեց երաժիշտների, մշակութային գործիչների, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև բազմաթիվ հյուրերի՝ ազդարարելով բարձրարվեստ երաժշտությամբ, ստեղծագործական համագործակցություններով և մշակութային բացառիկ իրադարձություններով հագեցած տասնօրյա ծրագիրը:

«Կաոյան Ֆեստ 2026»-ի ծրագրում ընդգրկված էին համաշխարհային ճանաչում ունեցող մենակատարների և կամերային երաժշտության հեղինակավոր արտիստների մասնակցությամբ համերգներ, դասական, կամերային և ժամանակակից երաժշտության բացառիկ կատարումներ, ինչպես նաև նոր ստեղծագործական համագործակցություններ:

Փառատոնի հիմնադիր, թավջութակահար Սևակ Ավանեսյանն ընդգծում է, որ «Կաոյան Ֆեստ»-ն արդեն վաղուց գերազանցել է երաժշտական փառատոնի սահմանները՝ ձևավորելով ստեղծագործական մեծ համայնք: «Ամեն անգամ Կաոյան վերադառնալիս զգում եմ նույն ջերմությունը, և մեզ համար ամենամեծ արժեքը հենց այս համայնքն է, որը ձևավորվել է փառատոնի շուրջ»:



Փառատոնի կարևոր ուղղություններից մեկը «Կաոյան Ֆեստ Ակադեմիան» է, որի շրջանակում աշխարհի տարբեր երկրներից ժամանած երիտասարդ երաժիշտները մասնակցում են ինտենսիվ վարպետության դասերի, աշխատում միջազգային հեղինակություն վայելող արվեստագետների հետ: Ակադեմիան այս տարի համալրված էր 55 երիտասարդ տաղանդներով, սակայն հոչակավոր արտիստների հետ վարպետության դասերին, աշխատարաններին ու համերգներին մասնակցեցին մոտ 120 երիտասարդ երաժիշտներ Կաոյանից, Հայաստանի տարբեր մարզերից և արտասահմանից:

Փառատոնի շրջանակում առաջին անգամ Հայաստանում ներկայացվեց «Վիեննական երեկո Կաոյանում» հատուկ ծրագիրը, որը վիեննական վալսի, օպերային երաժշտության և ջազային կատարումների համադրությամբ՝ Կաոյանում ստեղծեց եվրոպական մշակութային ավանդույթների յուրահատուկ մթնոլորտ:

Վիեննական երեկոյով ավարտվեց «Կաոյան Ֆեստ 2026»-ը՝ խոստանալով վերադառնալ ուղիղ մեկ տարի անց՝ նորից հուլիսի 4-ին, հինգերորդ անգամ՝ հոբելյանական փառատոնով:

«Կաոյան Ֆեստ»-ի բոլոր համերգները բաց էին հանդիսատեսի համար, իսկ կրթական ծրագրերն ու վարպետության դասերը հնարավորություն են տալիս երիտասարդ երաժիշտներին ներգրավվելու փառատոնի կրթական գործընթացում՝ որպես հյուր-մասնակիցներ:

Փառատոնի գլխավոր գործընկերը Կաոյանի համայնքապետարանն է: «Կաոյան Ֆեստ 2026»-ի իրականացմանն աջակցում են նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Ջանգեզուրի ոդնձամոլիբդենային կոմբինատը, ինչպես նաև բազմաթիվ գործընկեր կազմակերպություններ և աջակիցներ:

Սքանավորի՛ր QR կոդը՝ դիտի՛ր Կաոյան Ֆեստի մասին պատմող տեսանյութը:

Կապանի համայնքապետարանի վարչական նոր շենքում



Կարևոր ու երկար սպասված իրադարձություն Սյունիքի մարզկենտրոնում

Կապանի համայնքապետարանի վարչական շենքը, ամբողջական նորոգումից հետո, հանձնվել է շահագործման: Հանդիսավոր արարողությունը մեկնարկել է շատրվանի գործարկմամբ, որը վստահված էր այգու մշտական այցելու տարեց կապանցիներին: Հանդիսավոր բացմանը ներկա են գտնվել Սյունյաց թեմի առաջնորդը, Զանգեզուրի ողնաշարմոլիբդենային և Կապանի լեռնահարստացման կոմբինատների ղեկավար անձնակազմի ներկայացուցիչները, համայնքապետարանի այլ գործընկերներ, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսը և բազում քաղաքացիներ: Հյուրերը շրջել են տարածքում, ծանոթացել իրականացված աշխատանքներին, ժամանակակից ենթակառուցվածքներին:

Սքանավորի՛ր QR կոդը՝ ծանոթացի՛ր Կապանի Նոր վարչական շենքի ոչյամանքներին:



Շենքի վերակառուցումը՝ ժամանակի հրամայական

Ավելի քան 70 տարի առաջ կառուցված շենքում են կայացվել Կապանի համար կարևորագույն որոշումները և կերտվել՝ քաղաքի պատմությունը: Շենքի վերակառուցումը ժամանակի հրամայական էր,- շեշտում է Գևորգ Փարսյանը. **«Մեր անձնակազմը արդեն ֆիզիկապես չէր տեղավորվում գոյություն ունեցող շենքում, որոշ ստորաբաժանումներ գործունեություն էին ծավալում այլ շինություններում և, բնականաբար, նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտություն կար»:**



ՁՊՄԿ-ի աջակցությունը

Գոյություն ունեցող մասնաշենքի ուժեղացումը, վերակառուցումն ու նոր մասնաշենքի կառուցումը իրականացվել են սուբվենցիոն ծրագրով՝ համայնք-կառավարություն համաֆինանսավորմամբ՝ շուրջ 911 մլն դրամ ներդրմամբ, որում նշանակալի աջակցություն է ցուցաբերել Զանգեզուրի ողնաշարմոլիբդենային կոմբինատը՝ համայնքի համաֆինանսավորման մասնաբաժնից տրամադրելով 195 մլն դրամ:

Կառույցի կահավորման և վերազինման հարցում ևս համայնքին աջակցել է հանքարդյունաբերական հսկան՝ հատկացնելով 106 մլն դրամ՝ վարչական շենքի գույքի ձեռքբերման համար:

Այսպիսով՝ ունենք պատմական հարուստ անցյալին հարիր, ճարտարապետական դիմագիծը չխաթարող և քաղաքի զարգացման արդի տեմպերին համահունչ վարչական շենք:

Աննա Մելքումյան

Գոո Հակոբյան

Այցեքարտ

Ծնվել է 1983 թվականի հուլիսի 5-ին՝ ՁՊՄԿ աշխատակիցներ Հակոբ Հակոբյանի (ավտոինքնաթափի վարորդ) և Արևիկ Հակոբյանի (քիմիական լաբորատորիայի լաբորանտ) ընտանիքում: 1989-2000 թվականներին սովորել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 2000 թվականին ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Քիմիական ֆակուլտետի Օրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա բաժինը: 2005 թվականին ավարտել է այն և ստացել ճարտարագետի որակավորում: 2005 թվականին ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտուտ՝ որպես ասպիրանտ: 2008 թվականին պաշտպանել է գիտական աշխատանքը, ստացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հայաստանի և արտերկրյա գիտական ամսագրերում ունի տպագրված 11 գիտական հոդված:



Գիտությանը նվիրված կյանք.

Մանկուց՝ քիմիայի հրաշալի աշխարհում

- Նախ պատմեք Ձեր մասին: Ինչպե՞ս սկսվեց հետաքրքրությունը քիմիայի նկատմամբ, և ե՞րբ հասկացաք, որ սա հենց այն մասնագիտությունն է, որով ցանկանում եք զբաղվել:

- Երբ փոքր էի, աշխատանքային պահանջներն այլ էին, և երբեմն աշխատակիցները հնարավորություն էին ունենում երեխաներին իրենց հետ բերել աշխատավայր:

Դրանք 90-ականների տնտեսական դժվար տարիներն էին, երբ կոմբինատը գործում էր ոչ ամբողջ հզորությամբ: Մայրս քիմիական լաբորատորիայի լաբորանտ էր, և ես հաճախ էի հայտնվում այս միջավայրում: Մանկական աչքերով հետևում էի տարբեր փորձերի, որոնք ինձ իսկական հրաշք էին թվում: Հենց այդտեղ էլ ծնվեց առաջին հետաքրքրությունը քիմիայի նկատմամբ:

Դպրոցական տարիներին արդեն առարկան հեշտությամբ էր տրվում, իսկ ամենակարևորը՝ սիրով: Երբ եկավ մասնագիտական ընտրության ժամանակը, այլևս կասկած չունեի. ընտրելու եմ քիմիայի ոլորտը:

Ուսումնառության տարիներից հետո, գիտությունների թեկնածուի աստիճան ստանալուց հետո, աշխատանքի անցա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում՝ օրգանական և կիրառական քիմիայի լաբորատորիաներում, «Նաիրիտ» գործարանում, իսկ հետագայում իմ մասնագիտական ճանապարհը շարունակվեց ՁՊՄԿ-ում:

- Ձեր ընտանիքում ևս շատերն են աշխատել ընկերությունում, և այդ միջավայրն անմիջական ազդեցություն է ունեցել Ձեր մասնագիտական ընտրության վրա: Կարո՞ղ ենք ասել, որ սա նաև սերունդների շարունակականության պատմություն է:

- Անշուշտ՝ այո:

Անկեղծ ասած՝ ինձ համար մեծ ուրախություն էր կրկին հայտնվել այն միջավայրում, որը պահպանվել էր մանկության հիշողություններում: Մեր տարածաշրջանում շատ ընտանիքների համար կոմբինատը պարզապես աշխատավայր չէ. այն գերդաստանի պատմության մի մասն է, հպարտանալու առիթ և սերունդներին միավորող արժեք:

Երբ ստացա առաջարկը զբաղեցնելու քիմիական լաբորատորիայի ղեկավարի տեղակալի պաշտոնը, դա ինձ համար ոչ միայն մասնագիտական, այլև անձնական մեծ պատասխանատվություն էր:

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է քիմիան համարվում «չհնացող» գիտություն: Ինչպե՞ս է այն շարունակաբար զարգանում և մնում արդիական նույնիսկ ամենաժամանակակից տեխնոլոգիաների դարում:

- Դեռ ալքիմիայի ժամանակներից քիմիան մշտապես եղել է մարդկության զարգացման շարժիչ ուժերից մեկը: Պատահական չէ, որ պատմության տարբեր փուլերում հենց այս գիտության շնորհիվ են կատարվել կարևորագույն բացահայտումները:

Այսօր քիմիան վաղուց արդեն միայն օրգանական և անօրգանական ուղղությունների բաժանված գիտություն չէ: Այն ունի բազմաթիվ ինքնուրույն զարգացած ճյուղեր՝ պոլիմերային քիմիա, ֆիզիկական քիմիա, կոմպոզիցիոն նյութերի քիմիա և բազմաթիվ այլ ուղղություններ, որոնք շարունակում են ընդլայնել գիտության սահմանները:

Ես ինձ համարում եմ այս գիտության նվիրյալներից մեկը: Այսօր քիմիան բառացիորեն մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտում է՝ կենցաղային ամենօրյա օգտագործման իրերից մինչև հագուստ, դեղագործություն, ժամանակակից նյութեր և բարձր տեխնոլոգիաներ:

Գիտության մարդկանց համար ամենակարևորը փորձարարությունն է, նոր գիտելիքը և բացահայտումը: Իսկ լաբորատորիան այն վայրն է, որտեղ կարող ես գործնականում կիրառել այն ամենը, ինչ գիտես և ինչին տիրապետում ես:

- Այսօր ընկերության լաբորատորիայում կիրառվում են առաջատար սարքավորումներ և նորարարական լուծումներ: Ի՞նչ տեխնոլոգիական փոփոխություններ են հատկապես փոխել աշխատանքի որակն ու հնարավորությունները:

- Այսօր լաբորատորիան տեխնիկապես վերազինված ժամանակակից կառույց է: Նորագույն սարքավորումների կիրառումը, իհարկե, պահանջում է շարունակական ինքնակրթություն և մասնագիտական զարգացում, բայց միաժամանակ ստեղծում է նոր հնարավորություններ:

Ավտոմատացված բազմաթիվ գործընթացների շնորհիվ զգալիորեն նվազել է աշխատակիցների անմիջական շփումը քիմիական նյութերի հետ, բարձրացել են աշխատանքի անվտանգությունն ու ճշտությունը, իսկ նախկինում ձեռքով իրականացվող բազմաթիվ գործողություններ այժմ կատարվում են ժամանակակից սարքավորումներով:

Եթե համեմատենք տասնամյակ առաջվա և այսօրվա լաբորատորիան, տարբերությունն ակնհայտ է՝ թե՛ աշխատանքի կազմակերպման արագության, թե՛ կիրառվող ստանդարտների տեսանկյունից:

Այս պահին քիմիական լաբորատորիան նաև վերանորոգման փուլում է, ամբողջությամբ արդիականացվում է օդափոխության համակարգը, և սպասում ենք նոր սարքավորումների ստացմանը, որոնք էլ ավելի անվտանգ ու ճշգրիտ կդարձնեն լաբորատորիայի աշխատանքները: Այսօր էլ մենք տարածաշրջանի լավագույն լաբորատորիաներից մեկն ենք, իսկ իրականացվող աշխատանքների ավարտից հետո վստահաբար ավելի բարձր նշաձող ենք սահմանելու:

Քիմիական լաբորատորիան ՁՊՄԿ-ի առանցքային օղակներից մեկն է: Այն իրականացնում է ոչ միայն պլանային աշխատանքները, այլև անհրաժեշտության դեպքում կատարում է ստանդարտից դուրս առաջադրանքներ՝ մասնագետների համար ստեղծելով հետաքրքիր և բազմազան աշխատանքային միջավայր:

Իրականում կոմբինատի ամբողջ տեխնոլոգիական շղթան՝ հանքավայրի ուսումնասիրությունից մինչև պատրաստի արտադրանք, հիմնվում է լաբորատորիայում ստացված արդյունքների վրա: Լաբորատորիայում իրականացվում են հանքավայրի հետազոտման, հանքաքարի, պոչերի, միջանկյալ արտադրանքների, պատրաստի արտադրանքի և հարստացուցիչ ֆաբրիկայում օգտագործվող ռեագենտների նմուշների նմուշափորձարկումներ, որոնց արդյունքների հիման վրա ընկերության տարբեր բաժիններ կազմակերպում և իրականացնում են իրենց աշխատանքները: Լաբորատորիայում ամսական միջինը կատարվում է 25 000-30 000 նմուշափորձարկում:

Պղնձի և մոլիբդենի խտանյութի անալիզները իրականացվում են նաև միջազգային լաբորատորիաներում, և արդյունքները գրեթե ամբողջությամբ համընկնում են՝ թույլատրելի շեղումների սահմաններում: Սա մեր լաբորատորիայի աշխատանքի բարձր որակի լավագույն առաջացույցներից մեկն է:

Այս ամենը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ժամանակակից հանքարդյունաբերությունը վաղուց արդեն միայն ծանր տեխնիկա չէ: Այն գիտահեն արտադրություն է՝ հիմնված ժամանակակից տեխնոլոգիաների, բարձր ճշգրտության սարքավորումների և գիտական մոտեցումների վրա:

- Ի՞նչ արժեքներ եք փորձում փոխանցել Ձեր թիմին և երիտասարդ մասնագետներին, ովքեր նոր են մուտք գործում ոլորտ:

- Ինձ համար առաջնայինը մարդկային արժեքներն են և փորձի ու գիտելիքների փոխանցումը:

Եթե դրանք մնում են միայն մեկ մարդու մոտ, դրանց արժեքը սահմանափակվում է: Իսկ երբ դրանք փոխանցվում են գործընկերներին, ձևավորվում է ավելի ուժեղ թիմ, ավելի առողջ աշխատանքային միջավայր և փոխադարձ վստահություն:

Միշտ պատրաստ եմ կիսվել իմ փորձով, որովհետև համոզված եմ՝ թիմային աշխատանքի հաջողության կարևոր նախադայմաններից մեկը հենց գիտելիքի ազատ փոխանցումն է:

- Շատ երիտասարդներ երբեմն խուսափում են գիտությունից՝ այն համարելով չափազանց բարդ: Ի՞նչ խորհուրդ կտաք նրանց:

- Ի ուրախություն ինձ՝ անձամբ ճանաչում եմ բազմաթիվ երիտասարդների, ովքեր մեծ հետաքրքրությամբ են զբաղվում գիտությամբ:

Կարծում եմ՝ եթե երեխաները դեռ փոքր տարիքից հնարավորություն ունենան մասնակցելու փորձերի, տեսնելու քիմիայի գործնական կողմը և սեփական աչքերով բացահայտելու այդ աշխարհի հետաքրքրությունները, ապա անտարբերները շատ քիչ կլինեն: Այդ համոզմունքն իմ անձնական փորձից է գալիս:

Փոքր հետաքրքրությունները ժամանակի ընթացքում վերածվում են մեծ նպատակների, իսկ մեծ նպատակները ձևավորում են լավ մասնագետների:

Այս մասնագիտությունը պահանջում է սեր, նվիրում և պատասխանատվություն: Այստեղ այլընտրանք պարզապես չկա:

- Աշխատանքից դուրս ի՞նչ նախասիրություններ ունեք:

- Երաժշտությունն իմ կյանքի անբաժանելի մասն է եղել դեռ մանկուց, հատկապես սիրում եմ ռոք ժանրը: Վերջին տարիներին ինքնուրույն սովորել եմ նաև կիթառ նվագել:

Մյուս մեծ հետաքրքրությունս խոհարարությունն է: Սիրում եմ պատրաստել, փորձարկել նոր բաղադրատոմսեր և ուրախացնել ընտանիքիս ու ընկերներիս իմ պատրաստած ուտեստներով:

Գիտության մարդկանց հաճախ վերագրում են չափազանց լուրջ, նույնիսկ «չոր» լինելու կարծրատիպը: Գոռ Հակոբյանի հետ զրույցը, սակայն, հերթական անգամ ապացուցեց, որ գիտությունը կարող է համատեղվել մարդկային ջերմության, ստեղծագործ մտածողության և բազմակողմանի հետաքրքրությունների հետ: Նրա պատմությունը միայն մասնագիտական հաջողությունների մասին չէ: Այն պատմություն է ընտանեկան ավանդույթի, գիտության հանդեպ անկեղծ սիրո, շարունակական ինքնազարգացման և պատասխանատվության մասին: Իսկ ամենակարևոր ուղերձը, թերևս, այն է, որ ժամանակակից հանքարդյունաբերության հիմքում ոչ միայն հզոր տեխնիկան է, այլև գիտելիքը, հետազոտությունը և մարդիկ, ովքեր ամեն օր իրենց աշխատանքով ձևավորում են այդ արդյունքը:

Լիլիթ Իսրայելյան



Շարունակական կրթությունը՝ մասնագիտական զարգացման հիմքում

ԶՊՄԿ-ում շարունակական կրթությունը դիտարկվում է ոչ թե որպես առանձին նախաձեռնություն, այլ որպես զարգացման ռազմավարական ուղղություն:

2026 թվականի սկզբից ԶՊՄԿ-ի ուսումնական կենտրոնն իրականացրել է նեղ մասնագիտական ուղղություններով տարբեր վերապատրաստման դասընթացներ, որոնք էականորեն բարձրացրել են մասնագետների պրոֆեսիոնալիզմը՝ նպաստելով աշխատանքի որակի և արդյունավետության ցուցանիշների բարելավմանը:

Հիդրոտեխնիկական ենթակառուցվածքների բաժնի աշխատակիցներն անցել են վերապատրաստում.

- Ժամանակակից գեոդեզիական տեխնոլոգիաները հետազոտություններում և շինարարությունում,
- Հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասի վուլկանիզացման տեղամասի փականագործներն ու մեխանիկները վերապատրաստվել են հանքաքարը տեղափոխող ժապավենների վերանորոգման և կցման ուղղությամբ (իրականացնող՝ Rema Tip Top ընկերություն):

Կազմակերպվել են նաև աշխատակիցների տեխնիկական հմտությունների վերապատրաստման դասընթացներ՝ ժամանակակից կառավարման համակարգչային գործիքների տիրապետման ուղղությամբ, ինչպիսիք են JIRA և Power BI-ը:

Առաջնահերթություններից է արհեստական բանականության (AI) գործիքակազմի հմտությունների դասավանդումը՝ ըստ մասնագիտական ուղղությունների (իրավաբանական, վարչարարական և այլն):

Ժամանակակից արտադրական միջավայրը պահանջում է ոչ միայն փորձառություն, այլև նոր գիտելիքների մշտական թարմացում, մասնագիտական գործիքակազմի վերանայում և տվյալ հաստիքի պահանջներին համապատասխան կարողությունների զարգացում:

Այս համատեքստում իրականացվել են նաև մի շարք ատեստավորման և վերապատրաստման ծրագրեր՝ ուղղված աշխատակիցների մասնագիտական կարողությունների գնահատմանն ու զարգացմանը:

Այս տարվա ապրիլին կայացել է մանիպուլյատորների օպերատորների ատեստավորումը, որին մասնակցել է 12 աշխատակից: Ատեստավորման արդյունքներով 6 աշխատակից ցուցաբերել է բավարար արդյունք: Ատեստավորմանը նախորդել են նախապատրաստական դասընթացներ՝ կազմակերպվել է 2 դասընթաց, յուրաքանչյուրը՝ 2 ժամ տևողությամբ: Ատեստավորման գործընթացը տևել է 30 օր:

Մայիսի 12-ին Ուսումնական կենտրոնը մեկնարկել է Տեխնոլոգիական ավտոհավաքակայանի ունիվերսալ վարորդների ատեստավորման գործընթացը, որի նպատակն է լեռնային զանգված տեղափոխող վարորդներին բաշխել ըստ մասնագիտական պատրաստվածության և համապատասխան խմբերի:

Ծրագրին մասնակցել են BelAZ, CAT և Komatsu հիմնաթափերի 49 վարորդներ: Ատեստավորման արդյունքներով 41 վարորդ ապահովել է բավարար արդյունք, որոնցից՝

- **36 վարորդ տեղափոխվել է 1-ին խումբ,**
- **4 վարորդ՝ 2-րդ խումբ,**
- **1 վարորդ՝ 3-րդ խումբ:**



Գործընթացից առաջ կազմակերպվել են նախաատեստավորման դասընթացներ՝ 6 դաս, յուրաքանչյուրը՝ 2,5 ժամ տևողությամբ: Ատեստավորման ընդհանուր գործընթացը տևել է 30 օր և շարունակական բնույթ է կրում:

Վերոնշյալ դասընթացներն անցկացրել է «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի գործընկեր, հանքային տեխնիկայի շահագործման հավաստագրված դասընթացավար Լևոն Ավանեսյանը:

Հատկանշական է, որ վերջին շրջանում կոմբինատում առաջին անգամ իրականացվել է նաև ինժեներատեխնիկական աշխատակազմի ատեստավորում: Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է մասնագիտական զարգացման միասնական համակարգ ձևավորելու ճանապարհին:

Ատեստավորումը դիտարկվում է ոչ թե որպես վերահսկողական միջոց, այլ որպես հնարավորություն՝ վերարժևորելու տվյալ հաստիքի համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները, վերանայելու մասնագիտական գործիքակազմը և բացահայտելու զարգացման նոր ուղղությունները:

Այն աշխատակցին հիշեցնում է, որ մասնագիտական աճը շարունակական գործընթաց է, իսկ գիտելիքների թարմացումը՝ ժամանակակից արտադրության պահանջ:

Ժամանակին համահունչ փոխվում են և՛ տեխնոլոգիաները, և՛ աշխատանքային մոտեցումները, սակայն հաջողության գլխավոր նախապայմանը շարունակում է մնալ մարդը՝ իր գիտելիքներով, փորձով և սովորելու պատրաստակամությամբ:

Լիլիթ Իսրայելյան

Ցիկադա՝ ամենաաղմկոտ «երգիչը» բոլոր միջատներից



Լուսանկարը՝ Բերտա Մարտիրոսյանի

Ցիկադան միջատ է, որը հայտնի է իր անսովոր բարձր «երգով»: Իրականում երգում են միայն արու ցիկադաները՝ էգերին գրավելու համար, և նրանց ձայնը կարող է հասնել մինչև 120 դեցիբելի, ինչը համեմատելի է ոռք հատերգի կամ մոտ տարածությունից աշխատող շղթայական սղոցի աղմուկի հետ: Այսպիսով, ցիկադան աշխարհի ամենաաղմկոտ միջատներից է և համարվում է ամռանն ամենաբնորոշ «երաժիշտներից» մեկը:

Աշխարհում հայտնի է ցիկադայի ավելի քան 3000 տեսակ, որոնք տարածված են գրեթե բոլոր մայրցամաքներում, բացառությամբ՝ Անտարկտիդայի: Ամենաշատը հանդիպում են արևադարձային և մերձարևադարձային շրջաններում, սակայն բազմաթիվ տեսակներ ապրում են նաև Եվրոպայում և Ասիայում:

Հայաստանում ցիկադաները հատկապես հաճախ հանդիպում են Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի և Արարատի մարզերի տաք ու անտառապատ կամ թփուտներով հարուստ տարածքներում: Ամռան շոգ օրերին նրանց բարձր ձայնը հաճախ լսվում է ծառաշատ վայրերում:

COP17՝
Կենսաբանական բազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը, որը կոչվում է նաև UN Biodiversity Conference 2026 (CBD COP17), կանցկացվի 2026 թ. հոկտեմբերի 18-30-ը Երևանի «Մերիդիան» էքսպո կենտրոնում:

Ցիկադայի ամենահետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ որոշ տեսակներ 13 կամ նույնիսկ 17 տարի ապրում են հողի տակ, ապա միաժամանակ դուրս են գալիս մակերես, ապրում ընդամենը մի քանի շաբաթ, բազմանում և ավարտում իրենց կյանքի ցիկլը:

Չնայած բարձր աղմուկին՝ ցիկադան վտանգավոր չէ մարդու համար. չի խայթում, չի կծում և թունավոր չէ:

Ինչպես խուսափել անտառային հրդեհներից

Անտառում կրակ մի վառե՛ք, եթե դրա համար նախատեսված հատուկ վայր չկա կամ եղանակը շոգ, չոր և քամոտ է:



Մի՛ ձգեք չմարված ծխախոտ կամ լուցկի. նույնիսկ փոքր կայծը կարող է հրդեհի պատճառ դառնալ:



Մի՛ թողեք աղակե շշեր կամ բեկորներ. արևի ճառագայթները կարող են կենտրոնանալ դրանց վրա և բոցկում առաջացնել:



Խարույկ վառելու դեպքում այն մշտապես վերահսկեք, իսկ հեռանալուց առաջ լիովին մարեք՝ ջրով կամ հողով:



Չոր խոտի վրա մեքենա մի կայացրեք. տաք արտանետման համակարգը կարող է հրդեհ առաջացնել:



Մի՛ այրեք աղբ կամ չոր բուսականություն անտառին հարակից տարածքներում:



Ծուխ կամ կրակ նկատելու դեպքում անմիջապես տեղեկացրեք արտակարգ իրավիճակների ծառայությանը և հնարավորինս ճշգրիտ նշեք վայրը:



Հիշե՛ք. Անտառային հրդեհների մեծ մասը մարդու անզգուշության հետևանք է: Մի քանի րոպեի զգոնությունը կարող է փրկել հազարավոր ծառեր, կենդանիների բնակավայրեր և մարդկային կյանքեր:

Համարի լուսանկարները՝ Նվեր Ջելյայի

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
www.zcmc.am
press@zcmc.am